

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆԱԽԱԳԻՏ ԱՆԳՐԱՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ

1963 թ. նոյեմբերի 25—27-ր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության, ինստիտուտի նախաձեռնությամբ Նրևվանում կայացավ գիտական սեսիա՝ նվիրված Անդրկովկասի ժողովուրդների լեռնյան բարեկամության Սեսիային մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտները և ՍՄԿՊ Կենտկոմին աորնթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի անդրկովկասյան ֆիլիալները:

Ներածական խոսքով սեսիան բացեց Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զառոբյանը: Նա ընդգծեց այն կարևոր դերը, որ կոչված են խաղալու երեք եղբայրակից հանրապետությունների մտավորականությունը և հատկապես պատմաբանները մեր ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման և ընդլայնման, ՍՄԿՊ XX համագումարի և հունիսյան պլենումի որոշումներն իրականացնելու գործում:

ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեի անդրկովկասյան բյուրոյի նախագահ Կ. Ն. Բոչկարյովի ղեկուցումը նվիրված էր կոմունիզմի ծաղկուն կառուցման ժամանակաշրջանում Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական համագործակցության հարցերին: Նա հանգամանորեն ցույց տվեց հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների ձևոր բերած հաջողությունները վերջին տարիներին, ընդգծեց այն խոշոր դերը, որ կարող է խաղալ տնտեսության ու մշակույթի զարգացման ուղիների ճիշտ ժամանակին որոշելը, տնտեսական համագործակցությունը, սոցիալիստական մրցությունն ու առաջավոր փորձի փոխանակումը, պլանավորման կոորդինացիան:

Իր ղեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր, ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր Կ. Ա. Գալուսյանը կանգ առավ սովետական իշխանության համար Անդրկովկասի աշխատավորության մղած համատեղ պայքարի մի շարք հարցերի վրա, պայքար, որը լի է փոխադարձ օգնությամբ ու ան-

խորտակ բարեկամության բազմաթիվ դրվագներով: Նա ցույց տվեց ոուս ժողովրդի անշահախնդիր օգնությունը անդրկովկասյան ժողովուրդներին՝ հանուն իրական ազատության մղված պայքարում, բացահայտեց մի շարք բուրժուական գիտնականների աշխատություններում Անդրկովկասի աշխատավորների համատեղ պայքարի պատմության աղավաղումները:

«Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ուղղություն համագործակցության պատմությունից» ղեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Զ. Վ. Անճափաձեն, որը հետաքրքիր փաստեր բերեց իրենց ազատագրության համար մարտնչող Կովկասի ժողովուրդների համատեղ ուղղություն պայքարի պատմությանը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի Կոթակից-անդամ Մ. Պ. Աղայանը ղեկուցեց «Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության արմատները» թեմայով, բնութագրելով պատմական այն միջավայրը, որի պայմաններում ծնվել ու կոփվել է հարևան երեք հինավուրց ժողովուրդների բարեկամությունը:

Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Կ. Ա. Հուսեյնովի (Բաքու)՝ «Սոցիալիստական ազգերի հետագա զարգացումն ու մերձեցումը կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում» և դոցենտ Կ. Վ. Բեկաձեի (Թբիլիսի)՝ «Սովետական Միության սոցիալիստական ազգերի հետագա զարգացման ու մերձեցման լեռնյան կուրսը» ղեկուցումները նվիրված էին կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում կենսագործվող լեռնյան ազգային քաղաքականության մի շարք կարևոր հարցերի լուսաբանմանը:

«Սովետական Միության Կոմունիստական պարտիան՝ ՍՍՌԽ ժողովուրդների բարեկամության կազմակերպիչ ու ոգեշնչող» խորագիրն էր կրում պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանի (Նրևան) ղեկուցումը: Նա բազմաթիվ փաստերով ընդգծեց այն խոշոր դերը, որ խաղացել և խաղում է կոմու-

նիստական պարտիան մեր բազմադգ հայրենիքի ժողովուրդներին կոմունիզմի կառուցման դրոշի տակ համախմբելու, անխախտ բարեկամություն սերմանելու գործում: Պատմական գիտությունների թեկնածու Կ. Ռ. Ուղումյանը (Երևան) զեկուցեց «Անդրկովկասի պարտական կազմակերպությունների գործունեությունը աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության ասպարեզում» թեմայով:

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ռ. Վ. Էֆենդիևի (Բաքու) զեկուցումը նվիրված էր նոր մարդու դաստիարակության գործում սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և սովետական հարևանասիրության գաղափարների խաղացած դերին:

Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Գ. Ռ. Ղաբիրջանյանը իր զեկուցման մեջ պատմեց Քուբայիսի—Կիրովարադ—Լենինական քաղաքների միջև կազմակերպված սոցիալիստական մրցության մասին և ընդգծեց նրա խաղացած դերը վերահիշյալ քաղաքների տնտեսական հետագա զարգացման, հարևան ժողովուրդների առավել մերձեցման գործում:

Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ռ. Կարինյանը իր զեկուցման մեջ հանգամանորեն խոսեց Անդրկովկասի ժողովուրդների կուլտու-

րական համագործակցության մասին: Կուլտուրական կապերը ոչ միայն կամրջել են հարևան ժողովուրդներին, այլև փոխադարձ ազդեցության ճանապարհով նպաստել յուրաքանչյուր ժողովրդի կուլտուրայի առավել զարգացման:

«Ժողովուրդների բարեկամության արտացոլումը ադրբեջանական սովետական գրականության մեջ» թեմայով զեկուցեց Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Ա. Գադադարյանը (Բաքու), իսկ «Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ» թեմայով՝ րանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ս. Գ. Արեշյանը (Երևան): Վերջում ամփոփիչ ելույթ ունեցավ ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Պ. Կիր:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Մոսկվայի, Երևանի, Թբիլիսիի և Բաքվի գիտական հասարակայնության ներկայացուցիչները: Սեսիան ընդունեց որոշում, որ նշված են անդրկովկասյան ռեսպուբլիկաների պատմաբանների գիտական համագործակցությունը էլ ավելի ամրապնդելու մի շարք կոնկրետ միջոցառումներ:

Վ. Գ.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԴԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ

1963 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական սեսիան՝ նվիրված ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի ծննդյան 90-ամյակին:

Ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու Գ. Սարգսյանը զեկուցեց մեծանուն գիտնականի կյանքի ու գիտա-մանկավարժական գործունեության մասին: Հ. Մանանդյանը ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին, Ախալցխայում: Թիֆլիսում միջնակարգ կրթություն ստանալուց հետո ավարտել է Իննայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, իսկ այնուհետև՝ Լոստինե կարգով՝ Պետերբուրգի կայսերական համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը: 1900—1907 թթ. նա զբաղվում է մանկավարժությամբ՝ նախ էջմիածնի Դեռքյան ճեմարանում, ապա՝ Թիֆլիսի գիմնազիայում, ավանդելով հին հունարեն, գերմաներեն և հայերեն, ինչպես նաև հին հունական գրականություն և փիլիսոփայություն: 1909 թ. Մանանդյանը,

դարձյալ էքստերն կարգով, ավարտում է Տարտուի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և մոտ տասը տարի զբաղվում իրավաբանությամբ:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, բազմաթիվ հայ ականավոր մտավորականների հետ միասին, Հ. Մանանդյանը ես գալիս է իր ազատագրված հայրենիքը և ամբողջովին նվիրվում նոր կուլտուրայի ու գիտության ստեղծման գործին: Նա դառնում է Երևանի նորաստեղծ պետական համալսարանի առաջին ռեկտորն ու ամենահեղինակավոր դասախոսներից մեկը: Սանկավարժական եռանդուն աշխատանքին զուգընթաց Հ. Մանանդյանը ծավալում է գիտական բեղմնավոր գործունեություն, հրատարակելով բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատմության, պատմական աշխարհագրության, դրամագիտության, պատմական մետրոլոգիայի տարրեր խնդիրների վերաբերյալ: 1926 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1939 թ. բազմափաստակ գիտնականն ընտրվում

է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իսկ 1943 թ. նոյեմբերին հաստատվում նորաստեղծ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմում: Լ. Մանանդյանը վախճանվեց 1952 թ. փետրվարի 4-ին, յոթանասունինը տարեկան հասակում:

Համառոտակի ուրվագծելով ականավոր գիտնականի կյանքի ուղին, զեկուցողն այնուհետև հանգամանորեն վերլուծեց նրա գիտական գործունեությունը: Լ. Մանանդյանը սկզբնական շրջանում շատ է զբաղվել բանասիրությամբ և մի շարք պատմական աղբյուրների քննական հրատարակությամբ: Դեռևս զարսկզրին նա, Հրաչյա Աճառյանի հետ միասին, լույս չենթադրեց «Հայոց նոր վկաները» ժողովածուն, ուր ամփոփված են XII—XIX դարերի հայ վկայարանական գրականության քննական տեքստերը: Լ. Մանանդյանը հրատարակության համար պատրաստել է Գրիգոր Նազիանցու «Ճառերի նոննոսին պատկանող մեկնությունների թարգմանության և մեկնիչ էլիասին վերագրվող «Մեկնություն ստորոգութեանցն Արիստոտելի» տեքստերը, Թեոն Ալեքսանդրիացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց»-ի, «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք»-ի զբարար թարգմանությունները և այլն: Ճեքստարանական այս կարևոր աշխատանքին պուգընթաց անխոնջ գիտնականը գրում է նաև յառնասիրական մի շարք հետազոտություններ («Քաղվածքներ Եվսեբիոս Կեսարացու քրոնիկոնից մի հին ձևագրում», «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսարանությամբ» և այլն): Որոնյ պսակը հանդիսացավ 1928 թ. հրատարակված «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» մենագրությունը: Պարզելով մի շարք թարգմանական փիլիսոփայական երկերի հեղինակությունների հարցը, այստեղ Լ. Մանանդյանը քննարկում է հունարան դպրոցի գործունեության պարբերացման խնդիրը՝ նշանակալից ներդրում կատարելով հին հայկական թարգմանությունների ուսումնասիրման մեթոդիկայի և թվագրման մշակման ասպարեզում: Ն. Այոնցի «Դիոնիսոս Թրակացին և հայկական մեկնիչները» հետազոտությունից հետո, «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատությունը լուրջ ներդրում էր այդ կարևոր հարցի գիտական ուսումնասիրման ընթացվառում:

Նշանակալից և արդյունավետ է եղել Լ. Մանանդյանի գործունեությունը նաև Հայաստանի պատմական աշխարհագրության, դրամագիտության, պատմական մետրոլոգիայի բազմաթիվ խնդիրների գիտական լուսարանման ասպարեզում: Իր ուսումնասիրությունների արդյունքները նա ամփոփեց այնպիսի կարևոր մենագրություններում, ինչպիսիք են՝ «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեղտինգերյան քարտեզի», «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում», «Հայաստանի քաղաքների և առևտրի մասին հին ժամանակների համաշխարհային առևտրի կապակցությամբ» (V գ. մ. թ. ա.—XV գ. մ. թ. ա.) և այլն:

Ակադեմիկոս Լ. Մանանդյանի գիտական վաստակի մեջ պատկառելի տեղ են բռնում Հայաստանի սոցիալ-տնտեսական պրոբլեմներին նվիրված հետազոտությունները, որոնցով նա սկսեց զբաղվել 20-ական թվականներից: 1925 թ. լույս տեսավ «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարգպանության շրջանում» աշխատությունը: Այնուհետև բազմահմուտ գիտնականը հրատարակեց «Հայաստանի պետական հարկերը մարգպանության շրջանում», «Նյութեր հին Հայաստանի տնտեսական պատմության», «Դիտողություններ պարթևների և Արշակունյաց Հայաստանի ֆեոդի և ֆեոդալական զորքի մասին» և այլ ուսումնասիրություններ: Այս ընթացվառում Լ. Մանանդյանի կատարած մանրակրկիտ հետազոտությունների յուրովի ամփոփումն ու ընդհանրացումը եղավ «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» մեծարժեք մենագրությունը: Համակողմանիորեն ուսումնասիրելով հայկական ֆեոդալիզմի ծագման ու զարգացման պատմությունը, ականավոր գիտնականը հանգամանորեն վերլուծում է նախարարական տերությունների ներքին կառուցվածքը, նախարարների և թագավորի փոխհարաբերությունները, քննարկում նյութական բարիքներ արտադրողների դրության հարցը և բազմաթիվ այլ կանխ խնդիրներ՝ հանգելով պատմական գիտության համար միանգամայն նոր և կարևոր եզրակացությունների:

Հակոբ Մանանդյանի նշանակալից ծառայություններից մեկն էլ այն է, որ նա առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց մի շարք արժեքավոր տեքստեր, որոնք զգալի չափով նպաստեցին հին շրջանի պատմության և մշակույթի կարևոր խնդիրների լուսարանմանը:

Թագավաստակ գիտնականի ավելի քան կեսդարյա բեղմնավոր գործունեության յուրովի հանրագումարը հանդիսացավ «Քննական տեսություն հալ ժողովրդի պատմության» ծավալուն ուսումնասիրությունը: Առաջին հատորում Լ. Մանանդյանը գիտական համոզիչ փաստարկումներով և աղբյուրների նոր մեկնարանությամբ հիման վրա շարադրում ու քննարկում է հայ ժողովրդի պատմությունը նրա ծագման

շրջանից մինչև Արշակունյաց հարստության ակերգրու Երկրորդ հատորում վերլուծված են Արշակունյաց ժամանակաշրջանի պատմության հիմնական պրոբլեմները Երրորդ հատորն ընդգրկում է Հայաստանի պատմությունը XI—XV դարերում: Այս աշխատությունը հայ ժողովրդի պատմությանը նվիրված ամենանշանակալից աշխատություններից մեկն է և անգնահատելի տվյալներ հայագիտության բնագավառում: Հ. Մանանդյանի մեծարժեք հետազոտությունները, նրա հարուստ վաստակը ուրույն տեղ ունեն ինչպես հայագիտության, այնպես էլ սովետական պատմական գիտության գանձարանում:

Հակոբ Մանանդյանի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին Հայկական ՍՍՌ ԳԱ ակա-

դեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, թղթակից-անդամներ Մ. Հասրաթյանը, Լ. Խաչիկյանը և պրոֆ. Կ. Ղաֆադարյանը:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կյանքին և գործունեությանը նվիրված զեկուցումից հետո սեսիայի մասնակիցները լսեցին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանի «XVII դարի հայ վաճառականի ուղեմատյանը» գիտական հաղորդումը: Ընթերցվեց նաև Հայկական ՍՍՌ ակադեմիկոս Ս. Երեմյանի «Նաքշի Ռուստեմի՝ Շապուհ Առաջինի եռալեզվյան արձանագրությունը Հայաստանի մասին» զեկուցումը:

Ա. Գ.

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՒ

Նրևանի գիտական հասարակայնությունը ոչեց պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, գիտության վաստակավոր դործիչ Հենրի Գարրիբեյանի ծննդյան 60 և հասարակական ու գիտա-մանկավարժական գործունեության 40-ամյակը: Նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստը, որտեղ բազմավաստակ գիտնականի ու անկավարժի կյանքի ու գործունեության մասին զեկուցեց դոցենտ Ղազար Վարդապետյանը:

Հ. Գարրիբեյանը շուրջ 20 տարի գլխավորում է Նրևանի համալսարանի փիլիսոփայության ամբիոնը, վարում փիլիսոփայության պատմության և հայ փիլիսոփայական մտքի պատմության դասընթացները: Ակնհայտ է նրա վաստակը մարքս-լենինյան փիլիսոփայության մասնագետների պատրաստման ասպարեզում: 20-ից ավելի երիտասարդներ նրա ղեկավարությամբ պաշտպանել են թեկնածուական դիսերտացիա:

Հ. Գարրիբեյանը Սովետական Հայաստանում մարքս-լենինյան փիլիսոփայության, կոմունիստական գաղափարախոսության անխոնջ պրոպագանդիստներից մեկն է: Եվ պատահական չէ, որ նա հիմնադրման օրից ղեկավարում է «Գիտելիք» հանրապետական ընկերության փիլիսոփայական մասնաճյուղը:

Այս բոլորի հետ միասին Հ. Գարրիբեյանը հետազոտող գիտնական է: Տակավի՛ն երիտասարդ, նա հանդես եկավ իր առաջին փիլիսոփայական հոդվածով, իսկ այժմ նրա աշխա-

տությունների թիվն արդեն անցնում է 100-ից (որոնց մեջ կան տասից ավելի մենագրություններ): Չափազանց լայն է պրոֆ. Գարրիբեյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Այդ ևն վկայում են հետևյալ աշխատությունները. «Գիտությունը և նրա դերը հասարակության մեջ», «Հեգելի զարգացման թեորիան և մարքսիզմ-լենինիզմը», «Սոցիալիստական հասարակության հակասությունները և նրանց հաղթանա՜րման ուղիները», «Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը: Սակայն Հ. Գարրիբեյանի գիտական հետազոտության հիմնական բնագավառը հայ փիլիսոփայական մտքի բազմադարյան պատմությունն է: 1946 թ. լույս տեսավ նրա աշխատությունը Գալուստ Կոստանդյանի մասին, իսկ 1956 թ. սկսեց հրատարակվել բազմահատոր «Հայ փիլիսոփայական մտքի պատմությունը», (Ա հատոր՝ 1956, Բ հատոր 1958, Գ հատոր՝ 1959, Դ հատորը պատրաստ է ապագրության): Երկար տարիների ուսումնասիրությունների արգասիք հանդիսացող այս երկն ընդգրկում է հայ փիլիսոփայական մտքի պատմությունը նրա ծագման շրջանից մինչև մեր օրերը: Աշխատության ամփոփումը լույս է բնծայվել ռուսերեն մի հատորով:

Հորեկյարին ողջունեցին Նրևանի մի շարք բարձրագույն ուսումնական հիմնարկների և հասարակագիտական ամբիոնների ներկայացուցիչները:

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հորեկյարը:

Մ. ՄԵԼԻՔՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆ

1963 թ. հոկտեմբերի 28-ին Վիեննայում, ութսուն տարեկան հասակում, վախճանվեց հայ դասական բանասիրության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ներսես Ակինյանը:



Վաթսուն տարվա գիտական գործունեություն, շուրջ 500 գրական-պատմական-բանասիրական ուսումնասիրություններ, անտիպ բնագրերի քննական հրատարակություններ, թարգմանություններ, գրախոսականներ և զանազան հոդվածներ: Ահա բազմաշխատ գիտնականի կուտակած վաստակը հայրենի գիտության անդաստանում:

Հանձին Ն. Ակինյանի հայագիտությունը կորցրեց բազմակողմանի հետաքրքրությունների տեր մի գիտնականի, որը հայկական աղբյուրների ուսումնասիրությունը հարստացրեց ոչ միայն սևիական հետազոտություններով, այլև կես դար լինելով հայագիտական ամենալուրջ պարրերականներից մեկի՝ «Հանդես ամսօրյա»-ի աշխատակիցն ու խմբագրապետը, Հանդեսի հատորներում հրատարակեց նաև շատ ուրիշ գիտնականների բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք մեծապես նպաստեցին հայագիտության առաջընթացին բաժնորոգ դարում:

Մեծ է Ն. Ակինյանի դերը նաև հայ գրավոր մշակույթի հուշարձանների՝ հայերեն հին

ձեռագրերի հայթայթման, ցուցակագրման, պահպանման և ուսումնասիրության գործում: Հանգուցյալ գիտնականը 1909 թ. սկսած հանդիսանում էր Վիեննայի Մխիթարյան մատենադարանի մատենադարանապետը, իսկ Վիեննայից դուրս նա ձեռագրերով է զբաղվել, ինչպես նաև հայ մշակույթի մասին հրապարակախոսություններ է կարդացել Եվրոպայի և Արևելքի շատ երկրներում՝ Հայաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Սիրիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Կիպրոսում և այլուր:

Հատկապես թանկ է Ակինյանի երախտիչը հայկական աղբյուրների հրապարակման, զննահատման, բնագրերի ճշգրտման և զանազան բանասիրական հարցերի քննության բնագավառում: Դրա ցայտուն վկաներն են նրա աշխատությունները՝ «Կիրոն կաթողիկոս Վրաց» «Պատմություն հայ-վրացական հարաբերությունների» (1905), «Տիմոթեոս Կուզ հայ մատենագրության մեջ» (1909), «Յովնաթան Նադաշ և Յովնաթանյան և իրենց բանաստեղծական և նկարչական աշխատություններ» (1911), «Գրիգորիս Աղթամարցի» (1915), «Հինգ պանդուխտ տաղասացներ» (1921), «Սերևոս կախուկուս Բագրատունեաց և իւր Պատմութիւն» (1923), եռհատոր «Եղիշէ վարդապետ և իւր Պատմութիւն Հայոց պատերազմին» (1932, 1936, 1953), «Սիմէոն Դպրի Լեհացոյ ուղեգրութիւն» (1932), «Սերևոսի ժամանակագիրն և Փ. Բիզանդեայ Ա. Պատմութիւն» (1938), «Սիմէոն Պղնձահանեցի և իր թարգմանությունները վրացերենէ» (1947), «Գրիգոր Բահանայ Ակներցի, պատմագիր թաթարաց պատմութեան» (1948), «Շահապիվանի ժողովոյն կանոնները» (1949), «Կորին: Վարր երանելոյն Մաշտոց վարդապետի» (1949), «Բաղեշի դպրոցը» (1951) և այլն:

Լեզուների իմացությունը հնարավորություն է ընձեռել հանգուցյալ գիտնականին զբաղվելու նաև հայ թարգմանական գրականության համեմատական ուսումնասիրությամբ և հայտնաբերելու մի շարք նոր բնագրեր, որոնցից են՝ Հովհան Ոսկերեքանի մի աշխատության հայտնաբերումը ասորական մի կրկնագիր ձեռագրում, Թեոնի «Վասն ճարտասահական կրթութեանց» երկը, «Դիոնիսիոս Աղեքսանդրացու մի թուղթ» և այլ գործեր:

Հայ մատենագրության բազմադարյա շերտերը պեղող և երբեմն բեկորների հիման վրա

ամբողջությունների պատկերը վերականգնող ուժի հետախույզ ընկանաբար կարող էր ստանալ,—և մանավանդ գործունեության վերջին շրջանում ստացավ,—նաև սխալ տպավորություններ եր ուսումնասիրած որոշ երկերի կապակցությամբ, սակայն նա միշտ ունենցել է քննադատությանը և հաճախ ինքն անդրադարձել իր սխալներին:

Օրինակելի աշխատասիրությունն ու անձնավեր սերը մեծարարական մատենագրության նկատմամբ ուղեկցեցին ծերունագարդ գիտնականին մինչև կյանքի վերջին տարիները և նա ապագա հրատարակիչներին կտակեց շուրջ մեկ տասնյակ անտիպ գործեր, որոնք նոր լույս են տեսնում հայագիտության փանաղան առարկաների վրա:

Ձեռագիր վիճակում են գտնվում հանգուցյալի՝ «Ժամանակագրություն հայ գաղթական

ներթեան ի հրիմ (1300—1700)», «Սուրեն Կալիստենիսի Աղեքսանդրի վեպը հայ թարգմանությունամբ ըստ հնագույն խմբագրության», «Պատմութիւն հայ թարգմանութեան օտարալեզու ընդգիրներու» (408—1800), «Պատմութիւն հայ մատենագրութեան» (408—1800) երեք հատորից, Բաղմբարյան-Ակինյան «Հայերէն տպագրութիւններ առաջին 300 տարիներու» (1512—1812) և այլ գործեր:

Հ. Տաշյան, Ն. Ադունց, Բ. Հովսեփյան, Գ. Տեր-Մկրտչյան, Ն. Մառ, Յ. Մարկվարտ, Մ. Արեղյան, Հ. Աճառյան, Ստ. Մալխասյանց՝ անձնական ծանոթներն ու գրչակիցներն են եղել բազմաշխատ գիտնականի, որի հիշատակը կապրեցնեն իր անխոնջ գրչի արտադրանքները:

Գ. ԱՐԴԱՐՅԱՆ

ՎԼԱԴ ԲՐՆԵՅՅԱՆՈՒ

Նոյեմբերի 8-ին Բուխարեստում մահացավ Մուսիսկան Ժողովրդական Ռեսպուբլիկայի անվանի գիտնական, վաստակավոր հայագետ պրոֆ. դ-ր Վլադ Բրնեյանուն:

Պրոֆ. Բրնեյանուն ծնվել է 1900 թ. օգոստոսի 22-ին Ռումինիայի Տիմիշոարա քաղաքում: Ջերմվիցի համալսարանը ավարտելուց հետո, նա իր մասնագիտական ուսումը շարունակել է Փարիզում, Լոնդոնում և Դուբլինում (1924—1932 թթ.): Ստացել է իրավաբանական գիտությունների դոկտորի (1923) և բանասիրական գիտությունների դոկտորի (1931) գիտական աստիճաններ:

Իրրև լեզվաբան նա հմուտ էր հնդեվրոպական համեմատական լեզվաբանության մեջ և տիրապետում էր բազմաթիվ լեզուների (սանսկրիտ, հայերեն, հին պարսկերեն, հունարեն, լատիներեն, հոլանդերեն, անգլերեն, կելտական լեզուներից՝ գալերեն ու իռլանդերեն, ուլմական լեզուներ, այդ թվում նաև ռուսերեն, եվրոպական նորագույն լեզուներ և այլն): Պրոֆ. Վլադ Բրնեյանունի գիտա-մանկավարժական գործունեությունը հատկապես մեծ թափ ստացավ Ռումինիայում ժողովրդագրամոկրատական կարգեր հաստատվելուց հետո: Նա Բուխարեստի համալսարանում նշանակվեց հնդեվրոպական լեզուների համեմատական հրնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության, օսկերենի և ումրերենի ու հին պարսկերենի դասախոս: 1954 թ. սկսած դասախոսել է նաև Բուխարեստի մանկավարժական ինստիտուտում: 1958 թ. ստանձնել է նաև Ռու-

մինիայի գիտությունների ակադեմիայի հնդեվրոպական լեզվաբանության սեկտորի վարիչ պաշտոնը:



Անվանի գիտնականը երկար տարիների իր լեզուն և բազմաբովանդակ ստեղծագործական կյանքի մի մասը նվիրաբերեց հայագիտությանը: Նա աշակերտել էր այնպիսի պատկառելի հայագետների, ինչպիսիք են Ա. Մեյլեն, Ֆր. Մակլերը, Ն. Յորգան, Լ. Մարիեսը և ուրիշներ, աշխատակցել նրանց հետ:

Պրոֆ. Բընըցյանուն առաջին ուսումնական գիտնականն էր, որ քաջածանոթ էր հայ հին ու նոր լեզուներին և ազատորեն օգտվում էր հայկական աղբյուրներից։ Նա էր Ռումինիայի համալսարանի հայոց լեզվի և գրականության առաջին դասախոսը 1948—1953 թթ. Ռումինիայի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում դասախոսում էր հայագիտական առարկաներ, իսկ վերջին տարիներին համալսարանի բանասիրական ֆակուլտետում շարունակում էր հայագիտական կադրեր պատրաստելու գործը։

Պրոֆ. Բընըցյանուի գրչին են պատկանում շուրջ 190 գիտական աշխատություններ, որոնցից 90-ը հայագիտական բնույթի են։ Նրա գործերից շատերը լույս են տեսել ինչպես Ռումինիայում, այնպես էլ ՍՍՄՄ-ում և արտասահմանյան մի շարք երկրներում՝ ումիներեն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, պարսկերեն և այլ լեզուներով։

Հայ դասական լեզվի ուսումնասիրությանը է նվիրված պրոֆ. Բընըցյանուի «Հունարենի դերբայներով կազմված դարձվածների հայերեն թարգմանությունը» ծավալուն արժեքավոր գործը (ֆրանսերեն), «Ուրարտական անունները դասական հայերենում» (ֆրանսերեն և անգլերեն) և այլն։ Պատմա-բանասիրական բնույթի գործերից առավել ուշագրավ են նրա «Հայերը Ռեհիսթունի արձանագրության մեջ» (ֆրանսերեն), «Հայ ժողովրդի ծագման մի քանի խրնդիրներ» (ռուսերեն) և այլն։ Մեծսրժեք են ումիներենից հայ պատմության նվիրված նրա աշխատություններից «Հայերը ումիներենի պատմության և կյանքի մեջ» (ռումիներեն), «Հայ-

երը ումիներենի տեղանունների մեջ և հայկական ծագումով ումիներենի տեղանուններ» (հայերեն, ումիներեն) և շատ ուրիշներ։ Ավելի քան քառորդ դար շարունակ պրոֆ. Բընըցյանուն միաժամանակ հանդես էր գալիս հայագիտական արժեքավոր գեկուցումներով, ակտիվորեն մասնակցում ումիներենի հասարակական կյանքին, աշխատակցում է նրա կյանքը հայերեն թերթին։

1960 թ. աշնանը անվանի հայագետը մասնակցեց Մոսկվայում գումարված արևելագիտական միջազգային կոնգրեսին, ապա հրավիրվեց Հայաստան։ Նրանում նա հանդես եկավ մի շարք գեկուցումներով և սերտ կապեր մշակեց հայագիտական հիմնարկների և առանձին գիտնականների հետ։ Հայաստանից վերադառնալով, պրոֆ. Բընըցյանուն իր գործունեության վերջին երեք տարիների մեծ մասը նվիրեց հայագիտության հարցերին։ Բազմաթիվ են ու բազմալեզու նրա այն հոդվածները, որ վերջերս հրատարակեց ինչպես Ռումինիայի, այնպես էլ արտասահմանյան գիտական հանդեսներում և որոնք նվիրված են հայագիտական հիմնարկների աշխատանքներին և սովետահայ անվանի գիտնականների գործերին։ Պրոֆ. Բընըցյանուն Հայաստանի գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբագրական կոլեգիայի անդամ էր։

Հայ գիտական հասարակայնությունը բնականաբանաբար գնահատում է ումիներենի անվանի գիտնականի, նվիրված հայագետի գործունեությունն ու գիտական վաստակը։

Ս. ՔՈՒԱՆՋՅԱՆ